ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար օդորակիչների, տպիչների, համակարգչային և պատճենահանող սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԴ-ԳՀԾՁԲ-22/07» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2022 թվականի հուլիսի 25-ին կնքված N «ԴԴ-ԳՀԾՁԲ-22/07-4» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2024 թվականի մայիսի 21-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար հատկացվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ հավելված N 2-ը հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 7.5 և 7.13 կետեր

Պատվիրատու՝ Դատական դեպարտամենտ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 5

25.07.2022թ. ԿՆՔՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՊԻՉՆԵՐԻ, ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԵՎ ՊԱՏՃԵՆԱՀԱՆՈՂ ՍԱՐՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ԴԴ-ԳՀԾՁԲ-22/07-4» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«21» «05» 2024թ.

ք. Երևան

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Տեխնոինժիներինգ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Հովհաննիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 25.07.2022թ. կնքված N «ԴԴ-ԳՀԾՁԲ-22/07-4» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով Պայմանագրով սահմանված 5545000 (հինգ միլիոն հինգ հարյուր քառասունհինգ հազար) ՀՀ դրամ առավելագույն գնից 550000 (հինգ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի չափով ֆինանսական միջոցների առկայությունը և Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման անհրաժեշտությունը.

1.1.Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ հավելված N 2-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև Համաձայնագիրն ուժի մեջ մտնելը՝ 03.01.2024թ.-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում Կատարողի կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարումն իրականացվում է Համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 հավելվածը հանդիսանում է N 5 համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Դատական դեպարտամենտ	***«Տեխնոինժիներինգ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ ք. Երևան,Եղբայրության 1-ին նրբ. 14
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 02290157
Հ/Հ՝ 900011192151	Հ/Հ՝ 1510052737280100
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Արարատբանկ» ԲԲԸ
Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան	**Տնօրեն՝ Ա. Հովհաննիսյան**
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N՝1
«21» «05» 2024թ. կնքված N 5 համաձայնագրի

(Հավելված N 2
« 25 » « 07 » 2022թ. կնքված
«ԴԴ-ԳՀԾՁԲ-22/07-4» ծածկագրով պայմանագրի)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												ընդամենը
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
4	50311120/11	Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ					45000	45000	70000	70000	70000	100000	100000	100000	100000
5	50311250/4	Պատճենահանող սարքերի, տպիչների վերանորոգման ծառայություններ					90000	90000	140000	140000	140000	200000	200000	200000	200000
7	50311120/12	Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ					45000	45000	70000	70000	70000	100000	100000	100000	100000
8	50311250/5	Պատճենահանող սարքերի, տպիչների վերանորոգման ծառայություններ					67500	67500	105000	105000	105000	150000	150000	150000	150000

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները
կատարող՝ Ն. Գալստյան

(ստորագրություն) Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Տեխնոինժիներինգ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան,Եղբայրության 1-ին նրբ. 14
ՀՀՎՀՀ՝ 02290157
Հ/Հ՝ 1510052737280100
«Արարատբանկ» ԲԲԸ

Տնօրեն՝ Ա. Հովհաննիսյան

(ստորագրություն) Կ.Տ